

TR 75-13-01



ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
«ՌԵՍՈ» Ապահովագրական ՓԲԸ խորհրդի
« 15» մայիս 2018թ. որոշմամբ
խորհրդի նախագահ՝

Գ. ԶԱՔԱՐՅԱՆ _____
ստորագրություն

«ՌԵՍՈ»
ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՓԱԿ ԲԱԺԼԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՏԱՄԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ
ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ.....	3
2. ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ, ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀԱՍՎԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....	3
3. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԸ, ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՕՐՅԵԿՏՆԵՐԸ.....	5
4. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՌԻՍԿԵՐ, ՊԱՏԱՀԱՐՆԵՐ.....	5
5. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԾԱԾԿՈՒՅԹԻ ԲԱՑԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....	6
6. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՒՄԱՐ, ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԶՈՓ.....	7
7. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ.....	7
8. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾԸ.....	9
9. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԵՄԱՆ ԿԱՐԳԸ, ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ.....	9
11. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒԼՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.....	13
12. ՎՆԱՍԻ ՉԱՓԻ ՈՐՈՇՄԱՆ ԵՎ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ.....	16
13. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՌԻՍԿԻ ՄԵԾԱՑՄԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ.....	19
14. ՎԵՃԵՐԻ ԼՈՒՇՄԱՆ ԿԱՐԳԸ.....	19



1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Սույն պայմանները (այսուհետ՝ Պայմաններ) մշակված են համաձայն ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի, «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքի և համապատասխանում են ՀՀ ԿԲ կողմից «ՌԵՍՈ» Ապահովագրական ՓԲԸ տրված ԱՊՈ թիվ 0010 Լիցենզիայի «Ընդհանուր պատասխանատվության ապահովագրության» դասին:

1.2. ՀՀ օրենսդրության համաձայն և Պայմանների հիման վրա «ՌԵՍՈ» Ապահովագրական ՓԲԸ-ն (այսուհետ՝ Ապահովագրող) կնքում է գործունակ ֆիզիկական անձանց քաղաքացիական պատասխանատվության ապահովագրության պայմանագրեր/վկայագրեր (այսուհետ՝ Պայմանագիր/Վկայագիր):

1.3. Սույն Պայմանների հիման վրա կարող են մշակվել ապահովագրական ծրագրեր (պրոդուկտներ) (այսուհետ՝ Ծրագիր):

1.4. Սույն պայմանների համաձայն Պայմանագիր/Վկայագիր կնքելու դեպքում սույն Պայմանները դառնում են պարտադիր կատարման ենթակա Ապահովադրի, Ապահովագրողի, Ապահովագրված անձի և Տուժող անձի/անձանց համար:

2. ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ, ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀԱՄԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2.1. **Ապահովագրող՝** «ՌԵՍՈ» Ապահովագրական ՓԲԸ,

2.2. **Ապահովադիր՝** Ապահովագրողի հետ պայմանագիր կնքած գործունակ ֆիզիկական կամ իրավաբանական անձ: Սույն Պայմանների համաձայն կարող է ապահովագրվել ինչպես Պայմանագիր/Վկայագիր կնքած (Ապահովադիր) անձի պատասխանատվությունը, այնպես էլ Պայմանագրում/Վկայագրում նշված այլ անձի (այսուհետ Ապահովագրված անձ) քաղաքացիական պատասխանատվությունը:

Այսուհետ, սույն Պայմաններով Ապահովադիր է համարվում ինչպես Պայմանագիր/Վկայագիր կնքող անձը, այնպես էլ այն անձը, ում քաղաքացիական պատասխանատվությունը ապահովագրված է: Անձը, ում վնաս պատճառելու պատասխանատվության ռիսկը ապահովագրված է պետք է նշված լինի ապահովագրության Պայմանագրում/Վկայագրում: Եթե այդ անձը նշված չէ, ապա ապահովագրված է համարվում Ապահովադրի/Շահառուի պատասխանատվությունը:

2.3. **Տուժող՝** անձնական կամ գույքին պատճառված վնասներ կրած ցանկացած անձ, ով սույն Պայմաններով սահմանված կարգով ունի հատուցման իրավունք: Տուժող են համարվում նաև Տուժողի մահվան դեպքում Օրենքի համաձայն վնասների հատուցման իրավունք ունեցող անձինք: Տուժողի մահվանից կամ գործունեության դադարեցումից հետո նրա վերաբերյալ սույն Պայմաններով սահմանված կարգավորումները տարածվում են նրա իրավահաջորդների վրա: Սույն Պայմանների համաձայն Տուժող չեն համարվում և Ապահովագրական հատուցում ստանալու իրավունքից չեն օգտվում Ապահովադիրը և/կամ վնաս պատճառած անձը, նրանց ընտանիքի անդամները՝ կին/ամուսին, ծնողներ երեխաներ, քույր, եղբայր, տատ, պապ, թոռներ,

2.4. **Ապահովագրության պայմաններ**՝ սույն փաստաթղթում շարադրված ապահովագրության պայմաններ, որոնց հիման վրա կնքվում է ապահովագրության Պայմանագիր(Վկայագիր): Ապահովագրության պայմանները հանդիսանում են ապահովագրության Պայմանագրի (Վկայագիր) անբաժանելի մասը,

2.5. **Ապահովագրության պայմանագիր** (վկայագիր)՝ Ապահովագրողի և Ապահովադրի միջև գրավոր համաձայնություն, որի ուժով Ապահովագրողը պարտավորվում է Պայմանագրով/Վկայագրով սահմանված վճարի (այսուհետ՝ Ապահովագրավճար) դիմաց,



պայմանագրում նախատեսված պատահարի (այսուհետ՝ Ապահովագրական պատահար) տեղի ունենալու արդյունքում, հատուցել այլ անձին, ում օգտին կնքված է քաղաքացիական պատասխանատվության Պայմանագիրը/Վկայագիրը (Տուժող անձ) այդ Ապահովագրական պատահարի հետևանքով Տուժող անձի կյանքին, առողջությանը, կամ գույքին պատճառված վնասը,

2.6. Ապահովագրական ռիսկ՝ առաջանալու որոշակի հավանականությամբ և պատահականությամբ Ապահովագրական պատահարի տեղի ունենալու հետևանքով վնասի հնարավոր մեծություն,

2.7. Ապահովագրական պատահար՝ ապահովագրական Պայմանագրով/Վկայագրով նախատեսված դեպք կամ իրադարձություն, որի տեղի ունենալու ուժով Ապահովագրողը պարտավորվում է վճարել Ապահովագրական հատուցում: Սույն Պայմանների 4.1. կետով սահմանված և Պայմանագրով/Վկայագրով նախատեսված, տեղի ունեցած մեկ իրադարձությունը, համարվում է միևնույն Ապահովագրական պատահարը՝ անկախ Տուժող անձանց քանակից, վնասի փոխհատուցման պահանջների քանակից և դատական որոշումներից: Ապահովագրության Պայմանագրով/Վկայագրով Ապահովագրողը ապահովագրական պաշտպանություն է տրամադրում, ապահովագրության Պայմանագրի/Վկայագրի գործողության ընթացքում, Ապահովագրական պատահարի հետևանքով, Ապահովագրին երրորդ անձանց կողմից իրենց պատճառված վնասի փոխհատուցման պահանջ ներկայացնելու դեպքում, և արտահայտված է -ֆիզիկական անձանց կյանքին և առողջությանը վնաս պատճառելով -ֆիզիկական և իրավաբանական անձանց գույքային վնաս պատճառելով,

2.8. Ապահովագրական գումար՝ Պայմանագրով սահմանված գումար, որի սահմաններում Ապահովագրողը պարտավորվում է Ապահովագրական պատահարի տեղի ունենալու պարագայում, Պայմանագրով նախատեսված կարգով վճարել ապահովագրական հատուցում,

2.9. Հատուցման (Պատասխանատվության) սահմանաչափ՝ Ապահովագրության պայմանագրով որևէ Ապահովագրական ռիսկի համար նախատեսված Ապահովագրական հատուցման գումարի սահման՝ մեկ Ապահովագրական պատահարի հաշվարկով կամ ապահովագրության Պայմանագրի ողջ ժամանակահատվածի համար,

2.10. Ապահովագրավճար՝ ապահովագրության Պայմանագրով սահմանված չափով և պայմաններով Ապահովագրի կողմից Ապահովագրողին հնարավոր Ապահովագրական հատուցման դիմաց վճարվելիք գումար,

2.11. Ապահովագրական սակագին՝ Ապահովագրավճարի չափը Ապահովագրական գումարի միավորից՝ հաշվի առնելով ապահովագրության ծավալը եւ ապահովագրված ռիսկի բնույթը: Սահմանվում է Ապահովագրական գումարի նկատմամբ տոկոսներով:

2.12. Ապահովագրության օբյեկտ՝ Ապահովագրի (Շահառուի) գույքային շահերը՝ կապված գույքի տիրապետման, օգտագործման և տնօրինման հետ,

2.13. Ապահովագրության ժամկետ՝ ապահովագրության Պայմանագրով/Վկայագրով սահմանված ապահովագրական ծածկույթի գործողության ժամկետ

2.14. Ապահովագրական հատուցում՝ Ապահովագրական պատահար տեղի ունենալու արդյունքում Ապահովագրողի կողմից վճարման ենթակա գումար

2.15. Չհատուցվող գումար՝ Ապահովագրողի կողմից Ապահովագրին կամ այլ անձին ապահովագրության Պայմանագրով/Վկայագրով սահմանված չհատուցվող վնասի մաս, որը սահմանվում է՝ կոնկրետ գումարի կամ ապահովագրական գումարի նկատմամբ տոկոսի տեսքով: Չհատուցվող գումարի տեսակներն են՝

1) պայմանական չհատուցվող գումար, որի դեպքում Ապահովագրողն ազատվում է փաստացի վնասների կամ կորուստների հատուցման պարտականությունից, եթե այդ վնասը չի գերազանցում Ապահովագրական պայմանագրով նախատեսված չհատուցվող գումարի չափը, և պարտավոր է



վճարել հատուցումն ամբողջությամբ, եթե դրա մեծությունը գերազանցում է չհատուցվող գումարի չափը,

2) ոչ պայմանական չհատուցվող գումար, որի դեպքում Ապահովագրողն ազատվում է որոշակի մասով հատուցում իրականացնելուց՝ անկախ վնասի կամ կորստի ընդհանուր չափից: Ապահովագրության Պայմանագրով կարող են սահմանվել չհատուցվող գումարի այլ տեսակներ,

2.16. Մտածելու ժամանակ՝ Ֆիզիկական անձ հաճախորդի իրավունք առանց որևէ պատճառաբանության միակողմանիորեն լուծելու պայմանագիրը՝ դրա կնքմանը հաջորդող 7 աշխատանքային օրվա ընթացքում,

2.17. Ապահովագրական ծրագիր՝ Պայմանագրի մեջ ներառված ապահովագրական ծածկույթներ (ռիսկեր):

Սույն Պայմաններում կիրառվող հասկացությունների պարզաբանման բացակայության դեպքում դրանց պարզաբանումը իրականացվում է ՀՀ գործող օրենսդրությանը համապատասխան:

ՀՀ օրենսդրության և նորմատիվ ակտերում որևէ հասկացության պարզաբանման բացակայության դեպքում տվյալ հասկացության նշանակությունը պարզաբանվում է իր ուղղակի լեզվական նշանակությամբ:

3. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԸ, ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԸ

3.1. Սույն Պայմանների համաձայն ապահովագրության սուբյեկտներն են Ապահովագրողը և Ապահովադիրը:

3.2. Որպես Ապահովագրող հանդես է գալիս «ՌԵՍՈ» Ապահովագրական ՓԲԸ:

3.3. Որպես Ապահովադիր հանդես է գալիս Ապահովագրողի հետ ապահովագրության Պայմանագիր/Վկայագիր կնքած իրավաբանական կամ գործունակ ֆիզիկական անձը:

3.4. Սույն Պայմանների համաձայն Ապահովագրության օբյեկտ են հանդիսանում քաղաքացիների, իրավաբանական անձանց, այլ սուբյեկտների կյանքին, առողջությանը կամ գույքին պատճառված վնասի պատասխանատվության ի հայտ գալու ռիսկի առաջացման հետ կապված գույքային շահերը:

3.5. Ապահովադրի բնակելի տարածքի շահագործման արդյունքում պատասխանատվության ռիսկի ապահովագրության Պայմանագրի/Վկայագրի գործողությունը տարածվում է նաև Ապահովադրի հետ համատեղ բնակվող և նրա ընտանիքի անդամների (կին/ամուսին, մայր, հայր, քույր, եղբայր, երեխաներ) կողմից պատճառված վնասների գծով:

4. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՌԻՍԿԵՐ, ՊԱՏԱՀԱՐՆԵՐ

4.1. Սույն Պայմանների համաձայն Ապահովագրողը պատասխանատվություն է կրում, եթե Ապահովադրի գործողության (գործունեության) հետ կապված Ապահովագրական պատահարը հանգեցրել է երրորդ անձանց կյանքին, առողջությանը, գույքին պատահական և չկանխամտածված վնաս հասցնելուն («Քաղաքացիական պատասխանատվության» ռիսկ), բացառությամբ հետևյալ դեպքերից՝

4.1.1. տրանսպորտային միջոցների օգտագործման հետևանքով պատճառված վնասի հատուցումը,

4.1.2. Ապահովադրի, որպես բեռնափոխադրող տրանսպորտային միջոցի օգտագործման հետևանքով պատճառված վնասի հատուցումը,

4.1.3. մասնագիտական գործունեություն իրականացնելու ընթացքում հասցված վնասի հատուցումը,



4.1.4. շրջակա միջավայրին վտանգ ներկայացնող գործունեության իրականացումը (ձեռնարկություններ՝ բարձր վտանգի աղբյուրներ):

5. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԾԱԾԿՈՒՅԹԻՑ ԲԱՑԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ

5.1. Սույն Պայմանների համաձայն «Քաղաքացիական պատասխանատվության» ռիսկի գծով Ապահովագրական պատահար չի համարվում տեղի ունեցած իրադարձության հետևանքով երրորդ/տուժող անձանց կյանքին, առողջությանը և գույքին պատճառված վնասը, որը հետևանք է.

5.1.1. սպորտային մրցումներին կամ դրանց նախապատրաստական գործընթացում մասնակցելու,

5.1.2. մշտական, պարբերական կամ երկարաժամկետ ջերմային ազդեցության կամ գազի, գոլորշու, ճառագայթների, հեղուկների, խոնավության ազդեցության, կամ այլ ցանկացած, այդ թվում ոչ մթնոլորտային տեղումների ազդեցության (մուր, ծուխ, փոշի և այլն):

5.2. Ամեն դեպքում Ապահովագրական պատահար չի համարվում.

5.2.1. ցանկացած անձի/անձանց, ներառյալ Ապահովադրի, նրա ընտանիքի անդամի/ների և/կամ աշխատակցի/ների կողմից դիտավորյալ պատճառված վնասի համար ներկայացված պահանջները կամ հայցերը: Ընդ որում դիտավորյալ պատճառված վնաս է համարվում նաև գործողությունը կամ անգործությունը, որի դեպքում հնարավոր վնասի ի հայտ գալը կանխատեսելի է, սպասելի է բավականին մեծ հավանականությամբ և թույլ է տրվել այն անձի կողմից, ով պատասխանատու է այդ գործողության համար,

5.2.2. պատճառված վնասի ցանկացած պահանջ, որը պատճառվել է Ապահովադրի կողմից բնակելի տարածքի վերակառուցման (նախագծի փոփոխության) նորմերի և պահանջների խախտմամբ,

5.2.3. Ապահովադրի մերձավոր հարազատների (կին/ամուսին, երեխաներ, հայր, մայր, քույր, եղբայր, թոռներ) կողմից ներկայացված պատճառված վնասի փոխհատուցման պահանջները, ում պատասխանատվությունը ապահովագրված է տվյալ Պայմանագրով/Վկայագրով,

5.2.4. Ապահովադրի կողմից բարձր վտանգավորության աղբյուրների շահագործման հետևանքով պատճառված վնասը,

5.2.5. Ապահովադրիների կողմից ներկայացված պահանջները, որոնց պատասխանատվությունը ապահովագրված է նույն Պայմանագրով/Վկայագրով՝ միմյանց նկատմամբ,

5.2.6. վնասի հատուցման համար ցանկացած պահանջի ներկայացումը, որը հետևանք է բազմաբնույթ ռազմական գործողությունների, զորաշարժերի, քաղաքացիական պատերազմի, հասարակության կողմից տարբեր ընդվզումների, գործադուլների, առգրավման, բռնագրավման, աշխատանքի ընդհատման, ձերբակալության, քաղաքացիական կամ ռազմական իշխանությունների կարգադրությամբ որևէ գույքի ոչնչացման կամ վնասման, հատուկ կամ արտակարգ դրության հայտարարման,

5.2.7. միջուկային պայթյունի, ռադիացիայի կամ ռադիոակտիվ վարակման հետևանքով պատճառված ուղղակի կամ անուղղակի վնասը,

5.2.8. վնասի հատուցման համար պահանջի ներկայացնելը այն դեպքում, երբ վնասը պատճառվել է Ապահովագրողի պահանջով Ապահովագրական ռիսկի աստիճանը բարձրացնող հանգամանքները Ապահովադրի կողմից չվերացնելու հետևանքով,

5.2.9. անուղղակի վնասները, որոնց առաջացման և Ապահովագրական պատահարի հատկանիշներ ունեցող իրադարձության տեղի ունենալու միջև բացակայում է ուղիղ պատճառահետևանքային կապը,

5.2.10. բարոյական վնասը, բաց թողնված օգուտը, եկամտի կորուստը և այլ կողմնակի վնասները



5.2.11. ցանկացած անձի, այդ թվում Ապահովադրի ՀՀ գործող օրենսդրությանը հակասող գործունեության հետևանքով պատճառված վնասը,

6. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՒՄԱՐ, ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՀՄԱՆԱԶՄՓ

6.1. Ապահովագրական գումարը (Հատուցման/Պատասխանատվության սահմանաչափը) նշվում է ապահովագրության Պայմանագրում/Վկայագրում:

6.2. Ապահովագրության Պայմանագրով/Վկայագրով կարող են սահմանվել Ապահովագրողի Հատուցման/Պատասխանատվության սահմանաչափեր՝ յուրաքանչյուր Ապահովագրական պատահարի գծով: Յուրաքանչյուր Ապահովագրական պատահարի մասով հատուցման վճարումը ոչ մի դեպքում չի կարող գերազանցել Հատուցման/Պատասխանատվության սահմանաչափը:

6.3. Ապահովագրության Պայմանագրով/Վկայագրով Հատուցման/Պատասխանատվության սահմանաչափերում կարող են սահմանվել գույքային վնասների և անձնական վնասների, այդ թվում առողջությանը վնաս պատճառելու կամ մահվան, առանձին Ապահովագրական հատուցման առավելագույն գումարներ:

6.4. Ապահովագրական հատուցում վճարելուց հետո Ապահովագրական գումարը ինքնաշխատ նվազեցվում է հատուցման ենթակա չափով, եթե Պայմանագրում/Վկայագրում այլ բան նախատեսված չէ: Ապահովագրական գումարի նվազեցումը իրականացվում է Ապահովագրական պատահարն ի հայտ գալու օրվանից՝ Ապահովագրողի կողմից տեղի ունեցած իրադարձությունը Ապահովագրական պատահար ճանաչելու դեպքում:

6.5. Ապահովագրության Պայմանագրում/Վկայագրում կողմերը կարող են սահմանել չհատուցվող գումար (Ֆրանշիզա), որը վերաբերվում է յուրաքանչյուր Ապահովագրական պատահարին: Պայմանական չհատուցվող գումար սահմանելու դեպքում Ապահովագրողը ազատվում է ապահովագրական հատուցում իրականացնելուց, եթե վնասի չափը չի գերազանցում պայմանական չհատուցվող գումարի չափը: Եթե վնասի չափը գերազանցում է պայմանական չհատուցվող գումարի չափը, ապա Ապահովագրական հատուցման գումարից ֆրանշիզա չի նվազեցվում: Եթե ապահովագրության Պայմանագրում/Վկայագրում սահմանված է ֆրանշիզա և նշված չէ ֆրանշիզայի տեսակը (պայմանական կամ ոչ պայմանական), համարվում է, որ ապահովագրության Պայմանագրով/Վկայագրով սահմանված է ոչ պայմանական ֆրանշիզա:

6.6. Ապահովագրական գումարը (Հատուցման սահմանաչափը) սահմանվում է ՀՀ դրամով: Կողմերի համաձայնությամբ Ապահովագրական գումարը կարող է սահմանվել նաև արտարժույթով, որի համարժեքը համարվում է ՀՀ դրամով համապատասխան գումարը:

6.7. Եթե Պայմանագրում/Վկայագրում «Քաղաքացիական պատասխանատվության» ռիսկի համար Ապահովագրական գումարը սահմանված է արտարժույթով, ապա Ապահովագրական պատահարն ի հայտ գալու դեպքում կիրառվում է հատուցման օրվա դրությամբ ՀՀ կենտրոնական բանկի կողմից տվյալ արտարժույթի համար սահմանված փոխարժեքը: Եթե տվյալ արտարժույթի համար ՀՀ կենտրոնական բանկի փոխարժեքը Ապահովագրական հատուցման օրվա դրությամբ գերազանցում է 20 % և ավելին Պայմանագրի/Վկայագրի կնքման օրվա դրությամբ ՀՀ կենտրոնական բանկի փոխարժեքից, ապա Ապահովագրական հատուցման հաշվարկը կատարվում է Պայմանագրի կնքման օրվա դրությամբ ՀՀ կենտրոնական բանկի փոխարժեքին ավելացրած 20%:



7. ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐ, ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՍԱԿԱԳԻՆ

7.1. Ապահովագրավճարը հաշվարկվում է ելնելով Ապահովագրական գումարից (Հատուցման սահմանաչափից) և Ապահովագրողի կողմից սահմանված Ապահովագրական սակագնից, ապահովագրության Պայմաններից և այլ հանգամանքներից, որոնք ազդում են ռիսկի աստիճանի վրա:

7.2. Ապահովագրավճարը կարող է վճարվել կանխիկ՝ Ապահովագրողին կամ նրա ներկայացուցչին, կամ անկանխիկ եղանակով՝ փոխանցելով Ապահովագրողի հաշվարկային հաշվին:

7.3. Եթե ապահովագրությունն իրականացվում է համարժեք արտարժույթով, ապա Ապահովագրավճարը, հաշվարկման նպատակով, նշվում է արտարժույթով: Ապահովագրավճարը վճարվում է ՀՀ դրամով՝ Ապահովագրավճարի վճարման օրվա դրությամբ ՀՀ կենտրոնական բանկի փոխարժեքով:

Այն դեպքերում, եթե ՀՀ գործող օրենսդրության համաձայն Պայմանագրի/Վկայագրի կողմերի միջև թույլատրվում է հաշվարկներ իրականացնել արտարժույթով, ապա Ապահովագրավճարը Ապահովագրի կողմից կարող է վճարվել նաև արտարժույթով:

7.4. Ապահովագրավճարի վճարման չափերը և ժամկետները սահմանվում են ապահովագրության Պայմանագրով/Վկայագրով:

7.5. Ապահովագրողի համաձայնությամբ, Ապահովագրողին կարող է տրվել Ապահովագրավճարը տարածամկետ կարգով վճարելու հնարավորություն:

7.6. Տարածամկետ կարգով վճարվող Ապահովագրավճարի՝ վճարման ենթակա առաջին մասն Ապահովագրողը պարտավոր է վճարել Պայմանագրի/Վկայագրի ուժի մեջ մտնելու պահից ոչ ուշ, եթե Պայմանագրով/Վկայագրով այլ բան նախատեսված չէ:

7.7. Մեկ տարուց պակաս ժամկետով Պայմանագրի/Վկայագրի կնքելու դեպքում Ապահովագրավճարը վճարվում է միանվագ՝ մինչև Պայմանագրի/Վկայագրի ուժի մեջ մտնելը, եթե Պայմանագրով այլ բան նախատեսված չէ:

7.8. Ապահովագրավճարը Պայմանագրում/Վկայագրում նշված ժամկետներում չվճարելու դեպքում (միանվագ վճարման դեպքում) կամ առաջին հերթական Ապահովագրավճարը չվճարելու դեպքում (տարածամկետ վճարման դեպքում), Պայմանագրի/Վկայագրի համարվում է ուժի մեջ չմտած, և այդ ընթացքում տեղի ունեցած դեպքերը չեն համարվում Ապահովագրական պատահար և Ապահովագրողի մոտ չեն առաջացնում Ապահովագրական հատուցում վճարելու պարտավորություն:

7.9. Եթե Պայմանագրով/Վկայագրով սահմանված է Ապահովագրավճարի վճարման տարածամկետ եղանակ և մինչև Ապահովագրավճարի հերթական մաս(եր)ի վճարումը գրանցվել է Ապահովագրական պատահար, որի արդյունքում Ապահովագրողի կողմից հատուցման ենթակա գումարը կազմում է Ապահովագրական գումարի 20 (քսան) և ավելի տոկոսը, ապա Ապահովագրողն իրավունք ունի հատուցման ենթակա գումարից հաշվանցել վճարման ենթակա Ապահովագրավճարն ամբողջությամբ և Ապահովագրողին հատուցել առաջացած դրական տարբերությունը:

7.10. Պայմանագրով սահմանված ժամկետում և չափով Ապահովագրի կողմից Ապահովագրավճարը (Ապահովագրավճարի հերթական մասը) չվճարելու դեպքում Ապահովագրողը չի սահմանում լրացուցիչ ժամկետ Ապահովագրավճարի վճարման համար, չի ծանուցում այդ մասին Ապահովագրողին և միակողմանի լուծում է Պայմանագրի/Վկայագրի ազատվելով Պայմանագրով/Վկայագրով սահմանված Ապահովագրավճարի վճարման ամսաթիվ հանդիսացող օրվան հաջորդող օրվա ժամը 00:00-ից հետո տեղի ունեցած իրադարձությունների



հետևանքով առաջացած վնասների դիմաց Ապահովագրական հատուցումներ իրականացնելու պարտականությունից:

8. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔ

8.1. Սույն Պայմանների համաձայն Պայմանագրի/Վկայագրի գործողությունը տարածվում է միայն Ապահովագրողի հետ համաձայնեցված և ապահովագրության Պայմանագրում/Վկայագրում նշված Ապահովագրության տարածքում: Եթե Պայմանագրով/Վկայագրով այլ բան նախատեսված չէ, Ապահովագրության տարածք է հանդիսանում Ապահովադրի օրինական իրավունքով կամ Ապահովադրի իմացությամբ (թույլտվությամբ) այլ անձանց զբաղեցրած տարածքը, որտեղ նա իրականացնում է իր ամենօրյա գործողությունները (գործունեությունը):

9. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՔՄԱՆ ԿԱՐԳԸ, ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

9.1. Ապահովագրության Պայմանագիրը/Վկայագիրը կնքվում է գրավոր և պետք է համապատասխանի ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ նախատեսված վավեր գործարքի ընդհանուր պայմաններին:

9.2. Ապահովագրության Պայմանագիր/Վկայագիր կնքելու պահին Ապահովադիրը Ապահովագրողի պահանջով՝

ա) լրացնում է Ապահովագրողի կողմից սահմանված ձևով ապահովագրության դիմումը և տրամադրում է լրացված դիմումը Ապահովագրողին: Դիմումի բոլոր կետերը պետք է լրացվեն ընթեռնելի/հասկանալի ձևով՝ բացառելով երկակի մեկնաբանությունը: Ապահովագրության դիմումի/նկարագրության մեջ նշված տեղեկատվության իսկության պատասխանատվությունը կրում է Ապահովադիրը: Լրացված դիմումը/նկարագրությունը ստորագրվում և հաստատվում է Ապահովադրի կամ նրա լիազոր ներկայացուցչի կողմից: Ապահովագրության Պայմանագիրը/Վկայագիրը կնքելուց հետո ապահովագրության դիմումը համարվում է ապահովագրության Պայմանագրի/Վկայագրի անբաժանելի մասը:

բ) Ապահովագրողին ներկայացնում է Ապահովագրության օբյեկտի Ապահովադրի գույքային շահը հավաստող փաստաթղթերը (դրանց պատճենները), սեփականության իրավունքի վկայականը, Ապահովադրի սեփականության իրավունքի փոխանցումը հաստատող պայմանագրերը կամ ժառանգության իրավունքի վկայականը: Ապահովագրողն իրավունք ունի կրճատել ներկայացվող փաստաթղթերի ցանկը:

9.3. Պայմանագրի/Վկայագրի կնքման ժամանակ կամ գործողության ընթացքում Պայմանների դրույթները կարող են փոփոխվել (բացառվել կամ լրացվել) Կողմերի գրավոր համաձայնությամբ, եթե այդպիսի փոփոխությունները չեն հակասում ՀՀ գործող օրենսդրությանը: Ապահովագրության Պայմանների և Պայմանագրի/Վկայագրի դրույթների միջև հակասությունների առկայության դեպքում առավելությունը տրվում է Պայմանագրին/Վկայագրին:

9.4. Ապահովագրության Պայմանագրի/Վկայագրի բոլոր փոփոխությունները և լրացումները կատարվում են գրավոր՝ կողմերի միջև լրացուցիչ համաձայնագրի ստորագրմամբ:

9.5. Պայմանագրի/Վկայագրի գործողության ընթացքում Պայմանագրի/Վկայագրի կորստի դեպքում, Ապահովադրի գրավոր դիմումի հիման վրա, Ապահովագրողը տրամադրում է Ապահովադրին դրա կրկնօրինակը:

9.6. Պայմանագիրը/Վկայագիրը կնքվում է մեկ տարի ժամկետով, եթե դրանում այլ բան նախատեսված չէ:



9.7. Ապահովագրության պայմանագրի գործողության ժամկետը նշվում է Պայմանագրում/Վկայագրում:

9.8. Ապահովագրության Պայմանագիրը/Վկայագիրը, եթե Պայմանագրով/Վկայագրով այլ բան նախատեսված չէ, ուժի մեջ է մտնում՝

ա) Ապահովագրավճարի կամ դրա առաջին մասի կանխիկ վճարման դեպքում՝ վճարմանը հաջորդող օրվա ժամը 00:00-ին, բայց ոչ շուտ, քան Պայմանագրում/Վկայագրում նշված գործողության սկզբի օրվա 00:00-ից: Ընդ որում, վճարման օր է համարվում ստացականի/վճարման անդորրագրի վրա նշված ամսաթիվը:

բ) Ապահովագրավճարի կամ դրա առաջին մասի անկանխիկ վճարման դեպքում՝ Ապահովագրողի բանկի հաշվարկային հաշվին փոխանցելու նպատակով Ապահովագրի հաշվարկային հաշվից դուրս գրման օրվա հաջորդող օրվա ժամը 00:00-ին, բայց ոչ շուտ, քան Պայմանագրում/Վկայագրում նշված գործողության սկզբի օրվա 00:00-ից:

9.9. Ապահովագրության Պայմանագիրը/Վկայագիրը ավարտվում է Պայմանագրում/Վկայագրում նշված գործողության ավարտի տեղական ժամանակով ժամը 24:00-ին:

9.10. Ապահովագրությունը տարածվում է այն Ապահովագրական պատահարների վրա, որոնք տեղի են ունեցել Պայմանագրի/Վկայագրի ուժի մեջ մտնելուց հետո, եթե Պայմանագրում/Վկայագրում այլ բան նախատեսված չէ:

9.11. Ապահովագիրը Պայմանագրի/Վկայագրի կնքման ժամանակ կամ դրա գործողության ընթացքում պարտավոր է անհապաղ տեղեկացնել Ապահովագրողին բոլոր կնքված և/կամ կնքվող իր քաղաքացիական պատասխանատվության պայմանագրերի/վկայագրերի մասին:

9.12. Սույն Պայմանների հիման վրա Պայմանագիր/Վկայագիր կնքելու ժամանակ, Ապահովագիրը տալիս է իր համաձայնությունն առ այն, որ Ապահովագրողը Պայմանագրի/Վկայագրի ողջ գործողության ընթացքում և դրա ավարտից հետո 10 (տասը) տարվա ընթացքում իրավունք ունի՝ մշակել Պայմանագրում/Վկայագրում նշված ֆիզիկական անձանց անձնական տվյալները՝ ապահովագրության Պայմանագրի/Վկայագրի կատարման, վիճակագրական և վերլուծական նպատակներով, և ՀՀ նորմատիվ իրավական ակտերով սահմանված պահանջների կատարման նպատակով: Ապահովագիրը կրում է անձնական պատասխանատվություն ֆիզիկական անձանց անձնական տվյալների մշակման համաձայնության համար:

9.13. Սույն Պայմանների հիման վրա Պայմանագիր/Վկայագիր կնքելու ժամանակ, Ապահովագիրը նաև տալիս է իր համաձայնությունը Ապահովագրողի այլ ապահովագրատեսակների և ծառայությունների մասին իրեն տեղեկացնելու համար, ինչպես նաև Ապահովագրողի հետ ապահովագրության Պայմանագրի/Վկայագրի վերակնքելու համար:

Վերը նշված նպատակների համար Ապահովագրողն իրավունք ունի Պայմանագրի/Վկայագրի կնքման հետ կապված իրեն հայտնի դարձած անձնական տվյալները փոխանցել երրորդ անձանց, ում հետ Ապահովագրողն ունի կնքված համապատասխան համաձայնություն, որն ապահովում է անձնական տվյալների հուսալի պաշտպանությունը և անօրինական բացահայտման կանխումը:

Ապահովագրողը պարտավորվում է ապահովել Ապահովագրի անձնական տվյալների անվտանգությունը և գաղտնիությունը սույն կետով նշված նպատակներից բացի այլ նպատակներով: Անձնական տվյալների մշակման համաձայնությունը կարող է հետ կանչվել անձնական տվյալների սուբյեկտի կողմից ամբողջությամբ կամ մասնակի՝ այլ ապահովագրատեսակների մասով տեղեկացման մասով, Ապահովագրողին գրավոր դիմում ներկայացնելու միջոցով, որտեղ հստակ սահմանված կլինի նշված դիմումի Ապահովագրողի ստացման ամսաթիվը:

Անձնական տվյալների սուբյեկտի կողմից համաձայնության ամբողջությամբ հետ կանչման դեպքում ապահովագրության Պայմանագիրը/Վկայագիրը այդ անձի նկատմամբ դադարում է, իսկ եթե տվյալ սուբյեկտը հանդիսանում է Ապահովագիրը, ապա ապահովագրության



Պայմանագիրը/Վկայագիրը դադարում է ամբողջությամբ: Այդ դեպքում ապահովագրության Պայմանագիրը/Վկայագիրը դադարում է վաղաժամկետ՝ տվյալների մշակման համաձայնության հետ կանչման համապատասխան դիմումը ստանալու Ապահովագրողի կողմից ստանալու ամսաթվից:

9.14. Կնքելով ապահովագրության Պայմանագիր/Վկայագիր՝ Ապահովադիրը տալիս է իր համաձայնությունը Ապահովագրողին ՀՀ գործող օրենսդրության համաձայն ստանալ տեղեկատվություն Ապահովադրի վարկային պատմության վերաբերյալ: Նշված համաձայնությունը Ապահովադրի կողմից Ապահովագրողին տրվում է ապահովագրության Պայմանագրի/Վկայագրի կնքման պահից՝ ապահովագրության Պայմանագրում/Վկայագրում նշված տվյալների և տեղեկատվության ստուգման և Ապահովադրի վերաբերյալ այլ տեղեկատվության ստացման համար:

10. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԴԱԴԱՐՈՒՄԸ

10.1. Ապահովագրության Պայմանագիրը/Վկայագիրը դադարում է հետևյալ դեպքերում՝

- 10.1.1.** Պայմանագրում սահմանված գործողության ժամկետը լրանալու,
- 10.1.2.** Ապահովագրողի կողմից իր պարտականություններն ամբողջ ծավալով կատարելու,
- 10.1.3.** Ապահովադրի կողմից Պայմանագրով/Վկայագրով սահմանված ժամկետում և չափով հերթական Ապահովագրավճարը չվճարելու,
- 10.1.4.** Դատարանի կողմից ապահովագրության Պայմանագրի/Վկայագրի անվավեր ճանաչելու որոշում ընդունելու,
- 10.1.5.** ՀՀ գործող օրենսդրության համաձայն Ապահովագրողի լուծարման,
- 10.1.6.** Ֆիզիկական անձ Ապահովադրի մահվան, իրավաբանական անձ Ապահովադրի լուծարման կամ սնանկացման,
- 10.1.7.** Ապահովադրի կողմից գույքի օտարման,
- 10.1.8.** Ապահովագրողի պահանջով ՀՀ գործող օրենսդրությամբ նախատեսված դեպքերում և կարգով,
- 10.1.9.** Ապահովադրի պահանջով՝ այդ մասին ոչ պակաս, քան 15(տասնհինգ) օր առաջ գրավոր դիմում ներկայացնելով Ապահովագրողին,
- 10.1.10.** Ապահովագրողի և Ապահովադրի փոխադարձ համաձայնությամբ,
- 10.1.11.** ՀՀ գործող օրենսդրությամբ նախատեսված այլ դեպքերում:

10.2. Ապահովագրության Պայմանագիրը/Վկայագիրը կարող է վաղաժամկետ լուծվել Ապահովագրողի պահանջով ՀՀ գործող օրենսդրությամբ նախատեսված դեպքերում և կարգով:

10.3. Ֆիզիկական անձ Ապահովադիրն իրավունք ունի առանց որևէ պատճառաբանության միակողմանիորեն լուծելու ապահովագրության Պայմանագիրը/Վկայագիրը դրա կնքմանը հաջորդող 7 (յոթ) աշխատանքային օրվա ընթացքում (Մտածելու ժամանակ): Այդ դեպքում ապահովագրության Պայմանագիրը/Վկայագիրը համարվում է լուծված ֆիզիկական անձ Ապահովադրի կողմից ապահովագրության Պայմանագիրը/Վկայագիրը լուծելու մասին Ապահովագրողին ծանուցելու օրվան հաջորդող օրվանից: Ապահովադիրը դիմումի հետ պետք է ներկայացնի ապահովագրության Պայմանագրի/Վկայագրի բնօրինակը և Ապահովագրավճարի վճարման անդորրագրի բնօրինակը: Նշված փաստաթղթերի բացակայության դեպքում Ապահովադիրը անձամբ դիմումում նշում է դրանց չներկայացման պատճառները: Նշված փաստաթղթերը չներկայացնելը հիմք չի հանդիսանում ապահովագրության Պայմանագրի/Վկայագրի վաղաժամկետ լուծման մերժման համար:

10.4. Մտածելու ժամանակը չի կիրառվում հետևյալ դեպքերում.

ա) Պայմանագրի գործողության ժամկետը և (կամ) Պայմանագրով/Վկայագրով նախատեսված ապահովագրության գործողության ժամկետը չի գերազանցում 1 (մեկ) ամիսը,



բ) կնքմանը հաջորդող 7 (յոթ) աշխատանքային օրվա ընթացքում ֆիզիկական անձ Ապահովադիրը դիմել է Ապահովագրական հատուցում ստանալու պահանջով:

10.4.1. Ֆիզիկական անձ Ապահովադրի կողմից Պայմանագրի/Վկայագրի կնքման օրվանից 7 (յոթ) աշխատանքային օրվա ընթացքում Պայմանագրից/Վկայագրից հրաժարվելու դիմում ներկայացնելու դեպքում՝

-Ապահովագրավճարն ամբողջությամբ վերադարձվում է Ապահովադրին, եթե Ապահովադիրը հրաժարվել է Պայմանագրից/Վկայագրից մինչև դրա գործողության ժամկետի սկիզբը,

-Ապահովագրավճարը վերադարձման ենթակա է մասնակի՝ ապահովագրության Պայմանագրի/Վկայագրի չլրացած օրերի ժամկետին համամասնորեն, եթե Ապահովադիրը հրաժարվել է ապահովագրության Պայմանագրից/Վկայագրից ապահովագրության գործողության ժամկետի սկզբից հետո:

10.5. Ապահովագրության Պայմանագիրը/Վկայագիրը համարվում է դադարած Ապահովադրի գրավոր դիմումը ստանալու ամսաթվի կամ Ապահովագրողի և Ապահովադրի համաձայնությամբ այլ ամսաթվի ժամը 00:00-ից, բայց ոչ ուշ, քան սույն կետի առաջին պարբերությամբ նշված ժամկետից:

10.6. Ֆիզիկական անձ հաճախորդը իրավունք չունի պահանջելու Ապահովագրական հատուցում Մտածելու ժամանակի ընթացքում տեղի ունեցած Ապահովագրական պատահարի համար հետևյալ պայմանների միաժամանակ առկայության դեպքում.

ա) Մտածելու ժամանակի ընթացքում Ապահովագրական պատահարի մասին նա չի ծանուցել Ապահովագրողին,

բ) եթե այդ Ապահովագրական պատահարը տեղի ունենալուց հետո ֆիզիկական անձ հաճախորդը մինչև Մտածելու ժամանակի ավարտը ծանուցել է Ապահովագրողին Պայմանագիրը/Վկայագիրը լուծելու մասին:

10.7. Ապահովագրավճարի (Ապահովագրավճարի մի մասի) վերադարձը իրականացվում է Ապահովադրի Պայմանագրից/Վկայագրից հրաժարվելու դիմումը ներակայացնելու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում:

10.8. Եթե ապահովագրության Պայմանագիրը/Վկայագիրը վաղաժամկետ դադարում է Ապահովագրական պատահարից տարբերվող այլ հանգամանքների բերումով Ապահովագրական պատահար ի հայտ գալու հնարավորության վերանալու հետ, Ապահովագրողն իրավունքի ունի պահել գործած օրերի Ապահովագրավճարը:

10.9. Եթե Պայմանագրով/Վկայագրով կամ սույն Պայմանների այլ կետ(եր)ով այլ բան նախատեսված չէ, վերադարձման ենթակա Ապահովագրավճարի մի մասը հաշվարկվում է հետևյալ բանաձևով,

$$ՎԱ = \frac{(Ա - 35\% * Ա) * n}{N} - Z, \text{ որտեղ՝}$$

ՎԱ-վերադարձման ենթակա Ապահովագրավճարի մասը,

Ա- ապահովագրության Պայմանագրով/Վկայագրով վճարված Ապահովագրավճար,

n-վաղաժամկետ լուծման ամսաթվից մինչև ապահովագրության Պայմանագրի/Վկայագրի գործողության ավարտի օրերի քանակ,

Z-վճարված և վճարման ենթակա Ապահովագրական հատուցումներ,

N-Պայմանագրի/Վկայագրի գործողության ժամկետի օրեր:



11. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

11.1. Ապահովադիրն իրավունք ունի՝

11.1.1. Ծանոթանալ սույն Պայմանների հետ,

11.1.2. Պայմանագիր/Վկայագիր կնքել իր լիազորված անձի միջոցով,

11.1.3. Պայմանագրի/Վկայագրի պայմաններում փոփոխություններ կատարելու առաջարկ ներկայացնել Ապահովագրողին,

11.1.4. Սույն Պայմաններին և ՀՀ օրենսդրությանը համապատասխան վաղաժամկետ լուծել Պայմանագիրը/Վկայագիրը,

11.1.5. ՀՀ գործող օրենսդրության համաձայն ստանալ տեղեկատվություն Ապահովագրողի վերաբերյալ:

11.2. Ապահովադիրը պարտավոր է՝

11.2.1. Պայմանագրի կնքման պահին Ապահովագրողին հայտնել իրեն հայտնի այն հանգամանքների մասին, որոնք կարող են էական նշանակություն ունենալ Ապահովագրական պատահարի տեղի ունենալու հավանականության և դրա հետևանքով առաջացած հնարավոր վնասների չափը որոշելու համար, եթե այդ հանգամանքներն Ապահովագրողին հայտնի չեն և չեն կարող հայտնի լինել: Բոլոր դեպքերում էական են համարվում ապահովագրության Պայմանագրում/Վկայագրում նշված հանգամանքները, ապահովագրության դիմումը,

11.2.2. Պայմանագրով/Վկայագրով սահմանված Ապահովագրավճարը վճարել ժամանակին՝ Պայմանագրում/Վկայագրում նշված չափով և կարգով,

11.2.3. հետևել հակահրդեհային անվտանգության, շահագործման կանոններին, ինչպես նաև ժամանակին իրականացնել անհրաժեշտ վերանորոգման և կանխարգելիչ աշխատանքներ այն վայրում, որտեղ Ապահովադիրը բնակվում, աշխատում, իրականացնում է գործունեություն,

11.2.4. ձեռնարկել խելամիտ և հասանելի միջոցառումներ հնարավոր վնասի կանխարգելման և նվազեցման համար:

11.3. Ապահովագրական պատահարի հատկանիշներ ունեցող իրադարձություն ի հայտ գալու դեպքում Ապահովադիրը պարտավոր է՝

11.3.1. անհապաղ, բայց ապահովագրական պատահարի հատկանիշներ ունեցող դեպքի մասին իրեն հայտնի դառնալու պահից ոչ ուշ, քան 24 (քսանչորս) ժամվա ընթացքում դիմել համապատասխան իրավասու մարմիններին (ներքին գործերի մարմիններ, հակահրդեհային ծառայություն, վթարային ծառայություն, ԱԻՆ ստորաբաժանում և այլն) և ապահովել կատարված դեպքի փաստաթղթային ձևակերպումը և տեղի ունեցած իրադարձության հաստատումը, որի հետևանքով երրորդ անձանց պատճառվել է վնաս, պատահարի պատճառների, ընթացքի, հետևանքների, պատճառված վնասի բնույթի և չափի մասին նշումով,

11.3.2. ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ վնասի կանխարգելման և նվազեցման ուղղությամբ, և գործել այնպես, ինչպես կգործեր, եթե գույքը ապահովագրված չլիներ,

11.3.3. Ապահովագրական պատահարի հատկանիշներ ունեցող դեպքի ի հայտ գալու պահին անհապաղ, բայց ոչ ուշ քան 24 ժամվա ընթացքում այդ մասին հայտնել Ապահովագրողին՝ զանգահարելով Պայմանագրում/Վկայագրում նշված շուրջօրյա հեռախոսահամարով,

11.3.4. մինչև Ապահովագրողի ներկայացուցչի ժամանելը երրորդ անձանց պատճառված գույքային վնասները պահպանել (վնասված և չվնասված) այն տեսքով, որում այն հայտնվել է Ապահովագրական պատահարի հատկանիշներ ունեցող իրադարձությունը տեղի ունենալուց հետո: Ապահովագրական պատահարի հատկանիշներ ունեցող իրադարձության պատկերում փոխություններ հնարավոր է կատարել այն դեպքում, եթե դա թելադրվում է իրավասու



մարմինների կողմից՝ ելնելով անվտանգության կամ վնասի չափի նվազեցման միտումներից: Այն դեպքում, երբ անհնար է վնասված գույքը պահպանել այն վիճակում, որում այն հայտնվել է Ապահովագրական պատահարի հատկանիշներ ունեցող իրադարձությունից հետո, Ապահովադիրը պարտավոր է ամրագրել իրադարձության հետ կապված բոլոր վնասները՝ լուսանկարման, տեսաձայնագրման կամ այլ միջոցով, որը թույլ կտա ամրագրել վնասը մինչև Ապահովագրական պատահարի հատկանիշներ ունեցող իրադարձության պատկերը փոխվելը և տրամադրել դրանք Ապահովագրողին,

11.3.5. Ապահովագրողին կամ նրա լիազոր ներկայացուցչին հնարավորություն ընձեռել անցկացնել քննություն՝ վնասների պատճառների, չափի և այլ հանգամանքների հայտնաբերման նպատակով, ինչպես նաև Ապահովագրողի պահանջով ապահովել իր ներկայացուցչի ներկայությունը գնման ժամանակ,

11.3.6. Ապահովագրական պատահարի հատկանիշներ ունեցող իրադարձության մասին 11.3.3. կետով սահմանված կարգով Ապահովագրողին տեղեկացնելուց հետո 60 (վաթսուհին) աշխատանքային օրվա ընթացքում Ապահովագրողին ներկայացնել գրավոր դիմում՝ Ապահովագրական հատուցում ստանալու համար: Ընդ որում, գրավոր դիմումը պետք է պարունակի հետևյալ տեղեկությունները՝

- ա) Ապահովագրության Պայամանգրի/Վկայագրի համարը և կնքման ամսաթիվը,
- բ) Տուժող անձանց անուն(ներ)/ազգանուն(ներ) կամ անվանում(ներ)ը և հասցեն, որին վնաս է հասցվել,
- գ) վնասը ի հայտ գալու ամսաթիվը և ժամը,
- դ) վնասի բնույթի, պատճառի հանգամանքների, հետևանքների մասին տեղեկություն , այթ թվում նաև իրավասու մարմինների կողմից տրամադրված փաստաթղթերն ու տեղեկությունները,
- ե) Ապահովադրի գործողությունները վնասը ի հայտ գալու պահին ,
- զ) վնասի ենթադրելի չափը,

11.3.7. Ապահովագրական հատուցում ստանալու դիմում ներկայացնելու դեպքում Ապահովագրողին ներկայացնել հետևյալ փաստաթղթերը՝

- 1) Ապահովագրության Պայամանգիրը/Վկայագիրը,
- 2) Ապահովագրողի մոտ Ապահովադրի շահերը ներկայացնելու իրավունք ընձեռող լիազորագիր,
- 3) Ապահովագրական հատուցում վճարելու համար գրավոր դիմում՝ Ապահովագրողի կողմից սահմանված ձևով,
- 4) Ապահովագրական պատահարի հատկանիշներ ունեցող դեպքի օրվա դրությամբ Ապահովադրի պատասխանատվությունը, ինչպես տուժողի գույքային շահը հաստատող փաստաթղթեր (սեփականության իրավունքի վկայական, առք ու վաճառքի պայմանագիր, վարձակալության պայմանագիր և այլն),
- 5) օրենքով համապատասխան պատահարը քննելու իրավասություն ունեցող իրավասու մարմինների կողմից տրված փաստաթղթերի բնօրինակները կամ դրանց վավերացված պատճենները՝ (տեղեկանքներ, որոշումներ, վճիռներ և այլն), որոնցում ամբողջությամբ նշված է՝
 - պատահարի վայրը, տեղի ունենալու ամսաթիվը, ժամը, հանգամանքները և հետևանքները, նշված մարմինների (պաշտոնատար անձանց) տեղեկացնելու և ժամանման ամսաթիվը և ժամը, վնասների բնույթը և ցանկը,
 - տեղի ունեցած պատահարի հանգամանքների վերաբերյալ իրավասու պետական մարմնի կողմից կատարված քննությամբ վերջնական փաստաթուղթ, այլ տեղեկություններ, որոնք որպես կանոն պետք է նշված լինեն նման բնույթի փաստաթղթերի մեջ,
- 6) իրավասու մարմինների և/կամ ծառայությունների կողմից տրամադրված պատահարների ժամը, վայրը, բնույթը և պատճառները հաստատող տեղեկություններ:



Եթե համապատասխան իրավասու մարմինները հրաժարվել են տրամադրել Ապահովադիրն որևէ փաստաթուղթ, ապա Ապահովադիրը Ապահովագրողին է ուղարկում իր կողմից վերոհիշյալ մարմիններին ուղղված պատահարի վերաբերյալ քննություն իրականացնելու պահանջի և դրա գրավոր պատասխանի պատճենը:

11.3.8. Անհրաժեշտության դեպքում Ապահովագրողին կամ նրա լիազոր ներկայացուցչին տալ լիազորագիր՝ Ապահովադրի իրավունքների պաշտպանության և վնասի կարգավորման գործը իրականացնելու համար:

11.3.9. Միննույն ռիսկի գծով Այլ ապահովագրության պայմանագրերի/վկայագրերի առկայության դեպքում, եթե դրանք նախապես Ապահովադրի կողմից չեն նշվել, տեղեկացնել բոլոր ապահովագրողներին այդ մասին՝ նշելով մյուս ապահովագրողների անվանումները,

11.3.10. Առանց Ապահովագրողի համաձայնության չվերցնել իր վրա որևէ ուղղակի կամ անուղղակի պարտականություններ իր քաղաքացիական պատասխանատվության ապահովագրության Պայմանագրով/Վկայագրով նախատեսված վնասի կարգավորման հետ կապված, իսկ Տուժողի (ների) կողմից իրեն պահանջ կամ հայց ներկայացնելու դեպքում անմիջապես տեղեկացնել Ապահովագրողին:

11.4. Ապահովագրողն իրավունք ունի՝

11.4.1. ՀՀ գործող օրենսդրությամբ սահմանված կարգով պահանջել անվավեր ճանաչել Պայմանագիրը/Վկայագիրը, եթե Պայմանագիրը/Վկայագիրը կնքելուց հետո հաստատվի, որ Ապահովադիրը Ապահովագրողին գիտակցաբար հայտնել է ակնհայտ սուտ, կեղծ տեղեկություններ իրեն հայտնի հանգամանքների վերաբերյալ, որոնք ունեին էական նշանակություն Ապահովագրական պատահար ի հայտ գալու հավանականության որոշման և հնարավոր վնասի չափի մասին,

11.4.2. մերժել Ապահովագրական հատուցում, եթե Ապահովագրական պատահարը ի հայտ է եկել մինչև Ապահովագրավճարը (դրա առաջին կամ հերթական մասը) վճարելը,

11.4.3. մերժել Ապահովագրական հատուցումը, եթե Ապահովադիրը գիտակցաբար ներկայացրել է կեղծ փաստաթղթեր, տեղեկություններ և ապացույցներ կամ ձեռնարկել է դիտավորյալ գործողություններ՝ վնասը մեծացնելու նպատակով,

11.4.4. ձեռնարկել այնպիսի միջոցառումներ, որոնք նա անհրաժեշտ է համարում վնասը նվազեցնելու համար,

11.4.5. մինչև Պայմանագրի/Վկայագրի կնքումը, ինչպես նաև Պայմանագրի/Վկայագրի գործողության ընթացքում իրականացնել օրյեկտի գնում, որի օգտագործման/շահագործման հետ կապված ապահովագրվում է «Քաղաքացիական պատասխանատվության» ռիսկը: Ապահովադիրն իրավունք չունի խոչընդոտել Ապահովագրողին իրականացնել գնում,

11.4.6. ինքնուրույն պարզել վնասի առաջացման պատճառներն ու հանգամանքները, սահմանել պատճառված վնասի չափը, ինչպես նաև հարցումներ կատարել իրավասու մարմիններին Ապահովագրական պատահարի հատկանիշներ ունեցող դեպքի փաստը, պատճառը և պատճառված վնասի չափը հաստատող փաստաթղթերի և տեղեկատվության ստացման նպատակով,

11.4.7. հետաձգել Ապահովագրական հատուցման վճարման մասին որոշման ընդունումը, մինչև Ապահովագրական պատահարի հատկանիշներ ունեցող դեպքի բոլոր հանգամանքների պարզաբանումը, այդ թվում մինչև իրավասու մարմինների կողմից վերջիններիս ուղղված գրավոր հարցումների պատասխանները ստանալը, ապահովագրված գույքի վնասման, կորստի կամ



ոչնչացման հետևանքով քրեական գործի հարուցման դեպքում՝ մինչև դատարանի վճռի կայացումը կամ քրեական գործով վարույթն ավարտելը,

11.4.8. մերժել Ապահովագրական հատուցման վճարումը՝ Պայմանագրով/Վկայագրով և/կամ սույն Պայմաններով սահմանված Ապահովադրի պարտականությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում,

11.4.9. Ապահովադրի կողմից տրված լիազորագրի հիման վրա հանդես գալ նրա անունից երրորդ անձանց պատճառված վնասի հատուցման վերաբերյալ բանակցությունների վարման և համաձայնության գալու, և երրորդ անձանց կողմից Ապահովադրի նկատմամբ ներկայացրած հայցերի հիման վրա դատարաններում և արբիտրաժներում վարել գործերը:

11.5. Ապահովագրողը պարտավոր է՝

11.5.1. ապահովագրության Պայմանագրի/Վկայագրի կնքման ժամանակ Ապահովադրին ծանոթացնել սույն Պայմաններին,

11.5.2. չիրապարակել Ապահովադրի մասին ունեցած տեղեկությունները, բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերի,

11.5.3. կատարել ապահովագրության Պայմանագրով/Վկայագրով ստանձնած պարտականությունները,

11.5.4. ապահովագրության Պայմանագրի/Վկայագրի և սույն Պայմանների համաձայն Ապահովադրի կողմից բոլոր պահանջվող փաստաթղթերը ներկայացնելուց և Ապահովագրական պատահարի փաստը, պատճառները և չափը հաստատող բոլոր հարցերի կարգավորելուց հետո 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում որոշում կայացնել տեղի ունեցած պատահարը ապահովագրական ճանաչելու կամ չճանաչելու վերաբերյալ,

11.5.5. դեպքը Ապահովագրական պատահար ճանաչելուց հետո իրականացնել Ապահովագրական հատուցում 5(հինգ) աշխատանքային օրվա ընթացքում:

12. ՎՆԱՍԻ ՉՍՓԻ ՈՐՈՇՄԱՆ ԵՎ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՄԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

12.1. Ապահովագրական հատուցումը հաշվարկվում է այն չափով, որքան դա նախատեսված է վնասների փոխհատուցման վերաբերյալ ՀՀ գործող օրենսդրությամբ:

12.2. Ապահովագրողի կողմից վնասի չափը և Ապահովագրական հատուցման գումարը որոշվում է իրավասու մարմինների կողմից տրված պատճառված վնասի փաստի և հետևանքների վերաբերյալ փաստաթղթերի հիման վրա, հաշվի առնելով նաև տեղեկանքները, հաշիվները, գնացուցակները, հաշիվ ապրանքագրերը, վճարման անդորրագրերը, կատարված աշխատանքների ակտերը, պայմանագրերը, փորձագիտական տվյալները, դատական ակտերը: Ապահովագրության հատուցման գումարի որոշման համար, անհրաժեշտության դեպքում, կարող է հրավիրվել նաև Ապահովադիրը: Վերը նշված փաստաթղթերի հիման վրա կազմվում է հատուցման վերաբերյալ որոշում՝ ստորագրված Ապահովագրողի, Ապահովադրի և Տուժողի կողմից:

12.3. Ապահովագրողն իրավունք ունի ներգրավել անկախ փորձագետների փաստացի վնասի որոշման համար, որը պատճառվել է Ապահովագրական պատահարի հատկանիշներ ունեցող իրադարձության ի հայտ գալու հետևանքով:

12.4. Սույն Պայմանների 12.2. կետով թվարկված հանգամանքների շուրջ վեճի առկայության դեպքում հատուցումն իրականացվում է դատարանի վերջնական դատական ակտի համաձայն:

12.5. Ապահովադիրը Ապահովագրական հատուցում ստանալու համար պետք է Ապահովագրողին ներկայացնի հետևյալ փաստաթղթերը՝



12.5.1. քննություն իրականացնող մարմնի վթարային վկայագիր/փաստաթուղթ, որը պարունակում է երրորդ անձանց վնաս պատճառած Ապահովագրական պատահարի պատճառները և հնարավոր հետևանքները,

12.5.2. տեղի ունեցած իրադարձության հետ կապված Ապահովադրին ներկայացված հայցը,

12.5.3. վերջնական դատական ակտ, որը պարունակում է Ապահովագրական պատահարի տեղի ունենալու հետևանքով հատուցման ենթակա գումարի չափը,

12.5.4. ապահովագրության Պայմանագիրը/Վկայագիրը:

12.6. Ապահովագրական հատուցման ենթակա գումարի մեջ ներառվում են՝

12.6.1. Ֆիզիկական անձի առողջությանը վնաս պատճառելու կամ մահվան դեպքում.

- առողջությանը վնաս պատճառելու հետևանքով կորցրած աշխատավարձը (եկամուտը),
- առողջությանը վնաս պատճառելու հետևանքով կատարված բժշկական ծախսերը,
- հուղարկավորության կազմակերպման հետ կապված ծախսերը: Հուղարկավորման ծախսերը հատուցվում են Ապահովագրական գումարի 20 (քսան) տոկոսի չափով, բայց ոչ ավել քան 500.000 (հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ:

12.6.2. Ֆիզիկական կամ իրավաբանական անձանց գույքային վնաս պատճառելու դեպքում ուղղակի փաստացի վնասները, պայմանավորված գույքի ոչնչացմամբ կամ վնասմամբ, որը որոշվում է՝

- գույքի ամբողջական ոչնչացման դեպքում իրական (շուկայական) արժեքի չափով՝ մասհանելով մաշվածությունը: Ապահովագրված գույքի ամբողջական ոչնչացման և/կամ կորստի դեպքում Տուժողը Ապահովագրողի համաձայնությամբ իրավունք ունի Ապահովագրողի օգտին հրաժարվել ապահովագրված գույքի նկատմամբ իր իրավունքներից: Այս դեպքում Ապահովագրական հատուցումը տրվում է Ապահովագրական պատահարի օրվա դրությամբ ապահովագրված գույքի իրական արժեքի չափով, սակայն ոչ ավել, քան Պայմանագրով/Վկայագրով սահմանված Ապահովագրական գումարը: Ընդ որում, Ապահովագրական հատուցման վճարումից առաջ Ապահովադիրը պարտավոր է Ապահովագրողի հետ կնքել ոչնչացված գույքի և նրա մնացորդների նկատմամբ իրավունքների փոխանցման վերաբերյալ համաձայնություն,
- մասնակի վնասման դեպքում՝ վերականգնողական ծախսերի չափով, որը անհրաժեշտ է գույքը այն վիճակի բերելու համարը, որում նա գտնվել է մինչև Ապահովագրական պատահարը, սակայն ոչ ավել, քան Ապահովագրական գումարը և Ապահովագրական պատահարի օրվա դրությամբ վնասված գույքի իրական (շուկայական) արժեքը: Վերականգնողական աշխատանքները չեն ներառում վնասված գույքի բարելավման համար կատարվող լրացուցիչ ծախսերը, ապահովագրված գույքի ժամանակավոր կամ օժանդակ վերանորոգման համար կատարվող ծախսերը, աշխատանքն արագացնելու ծախսերը, անհրաժեշտ ծախսերից ավել կատարված ծախսերը, չհիմնավորված ծախսերը,
- Ապահովադրի մեղավորության աստիճանի և հանգամանքների նախնական բացահայտման խելամիտ ծախսերը (եթե տվյալ իրադարձությունը ճանաչվել է Ապահովագրական պատահար),
- ենթադրվող ապահովագրական պատահարի համար դատական մարմիններում գործերի վարման ծախսերը (եթե տվյալ իրադարձությունը ճանաչվել է Ապահովագրական պատահար),
- Տուժող անձանց կյանքի և գույքի փրկման կամ վնասի նվազեցման համար կատարված անհրաժեշտ և խելամիտ ծախսերը, բայց ոչ ավել քան Պայմանագրով/Վկայագրով սահմանված Ապահովագրական գումարի 10%-ը, որոնց Ապահովագրական պատահարի հետևանքով պատճառվել է վնաս: Վնասների նվազեցման համար կատարվող ծախսերը, եթե այդ ծախսերը անհրաժեշտ են և/կամ կատարվել են Ապահովագրողի ցուցումներով, հատուցման ենթակա են,



նույնիսկ եթե համապատասխան միջոցառումներն ապարդյուն են անցել: Այդպիսի ծախսերը ենթակա են հատուցման միայն այն դեպքում, երբ վնասի գումարը գերազանցում է Պայմանագրում/Վկայագրում սահմանված Չհատուցվող գումարի չափը:

12.7. Եթե վերանորոգման արժեքը հաշվի, հրահանգ-պատվերի կամ հաշվարկման ակտի մեջ նշված է արտարժույթով կամ, եթե Ապահովագրական գումարը Պայմանագրով/Վկայագրով սահմանված է արտարժույթով, ապա Ապահովագրական հատուցումը իրականացվում է Ապահովագրական պատահար տեղի ունենալու օրվա դրությամբ ՀՀ կենտրոնական բանկի կողմից հրապարակված փոխարժեքով, սակայն Պայմանագիրը/Վկայագիրը կնքելու օրվա դրությամբ ՀՀ կենտրոնական բանկի կողմից հրապարակված փոխարժեքի 10 (տասը) տոկոս շեղման սահմաններում:

12.8. Եթե Ապահովագրական պատահարն ի հայտ գալու պահին, Ապահովադրի «Քաղաքացիական պատասխանատվության» ռիսկը ապահովագրված է եղել նաև այլ ապահովագրական ընկերություններում, ապա Ապահովագրողը Ապահովագրական հատուցումը վճարում է միայն Ապահովադրի կողմից կնքված քաղաքացիական պատասխանատվության ապահովագրության բոլոր պայմանագրերի գծով պարտավորությունների ընդհանուր գումարի նկատմամբ իր կողմից կնքված պայմանագրի համար Պատասխանատվության սահմանաչափի համամասնության չափով:

12.9. Ապահովագրողի կողմից Ապահովագրական հատուցման վճարումը իրականացնում է Տուժող անձանց, բացառությամբ Ապահովագրական պատահարի հետ կապված և Ապահովագրողի հետ համաձայնեցված՝ Ապահովադրի կողմից կատարված լրացուցիչ ծախսերը:

12.10. Այն դեպքում, երբ պատճառված վնասը փոխհատուցվել է այլ անձանց կողմից, Ապահովագրողը վճարում է միայն ապահովագրության Պայմանագրով/Վկայագրով հատուցման ենթակա գումարի և այլ անձանց կողմից փոխհատուցված գումարի տարբերությունը:

12.11. Պայմանագրի/Վկայագրի և սույն Պայմաններին համապատասխան Ապահովադրի կողմից Ապահովագրական պատահարի առաջացումը հաստատող փաստերի, պատճառների և վնասի չափի մասին բոլոր անհրաժեշտ փաստաթղթերի ներկայացումից հետո Ապահովագրողը կայացնում է Ապահովագրական հատուցման վճարման/մասնակի վճարման կամ վճարումը մերժելու մասին որոշում առավելագույնը 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում:

12.12. Ապահովագրական հատուցում վճարելու մասին որոշում կայացնելուց հետո 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում Ապահովագրողն իրականացնում է Ապահովագրական հատուցման վճարում:

12.13. Ապահովագրական հատուցման վճարման օր է համարվում անկանխիկ վճարման դեպքում՝ Ապահովագրողի (ներա ներկայացուցչի) հաշվարկային հաշվից Ապահովադրին (Շահառուին) դրամական միջոցների փոխանցման օրը, կանխիկ վճարման դեպքում՝ Ապահովագրողի դրամարկղից Ապահովադրին կանխիկ գումարով դրա վճարման օրը:

12.14. Ապահովագրողին Ապահովագրական հատուցման պահանջ ներկայացնելու իրավունքը սպառվում է Ապահովագրական պատահարը ի հայտ գալու պահից 2 (երկու) տարվա ընթացքում:

12.15. Ապահովագրական պատահարը ի հայտ գալու պահից 2 (երկու) տարվա ընթացքում Ապահովադրին իրավունք ունի պահանջել Ապահովագրողից կամ այլ անձից, ով ստացել է Ապահովագրական հատուցում, վերադարձնել նրանց վճարված գումարը, եթե դրա համար ի հայտ գան կամ հայտնաբերվեն հիմքեր, որոնք նախատեսված են ՀՀ օրենսդրությամբ կամ սույն Պայմաններով:



13. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՌԻՍԿԻ ՄԵԾԱՑՄԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ

13.1. Պայմանագրի/Վկայագրի գործողության ընթացքում Ապահովադիրը պարտավոր է անհապաղ, բայց ոչ ուշ, քան ի հայտ գալուց 24 ժամվա ընթացքում, Ապահովագրողին գրավոր տեղեկացնել Պայմանագրի/Վկայագրի կնքման պահին Ապահովագրողին հայտնած հանգամանքների փոփոխությունների մասին, որոնք մեծացնում են Ապահովագրական ռիսկը:

13.2. Ապահովագրական ռիսկը մեծացնող հանգամանքների փոփոխություններ են համարվում Պայմանագրում/Վկայագրում կամ գրավոր դիմումում համաձայնեցված ապահովագրության հանգամանքները:

13.3. Ապահովագրական ռիսկը մեծացանալու հանգամանքների մասին տեղեկացված Ապահովագրողն իրավունք ունի փոփոխել Պայմանագրի/Վկայագրի պայմանները և/ կամ պահանջել Ապահովադիրից լրացուցիչ վճար՝ ռիսկը մեծանալուն համապատասխան:

13.4. Եթե Ապահովադիրը, իրավահաջորդը հրաժարվում է Պայմանագրի/Վկայագրի պայմանների փոփոխությունից կամ լրացուցիչ Ապահովագրավճար վճարելուց, ապա Ապահովագրողն իրավունք ունի պահանջել լուծել ապահովագրության ՀՀ գործող օրենսդրությանը համաձայն:

13.5. Եթե Ապահովադիրը չի հայտնում Ապահովագրողին ապահովագրության Պայմանագրի/Վկայագրի կնքման պահին հայտնած էական հանգամանքների փոփոխության մասին, և եթե այդ հանգամանքները բերում են վնասի առաջացման, ապա ապահովագրության Պայմանագրի/Վկայագրի համարվում է կողմերի համաձայնությամբ վաղաժամկետ դադարած՝ ապահովագրական ռիսկը մեծանալու հանգամանքներն ի հայտ գալու պահից:

13.6. Ապահովագրողն իրավունք չունի պահանջելու լուծել ապահովագրության Պայմանագրի/Վկայագրի, եթե Ապահովագրական ռիսկը մեծացնող հանգամանքները ծանուցման պահին վերացել են:

14. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ

14.1. Սույն Պայմանների հիման վրա կնքված Պայմանագրերից բխող վեճերը լուծվում են կողմերի փոխադարձ համաձայնությամբ: Տարաձայնությունների դեպքում վեճերը լուծվում են Ֆինանսական համակարգի հաշտարարի կողմից՝ «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքի համաձայն կամ դատական կարգով՝ ՀՀ օրենսդրության համաձայն:

14.2. Վնասի չափի և դրա պատճառների վերաբերյալ վեճերի առաջացման դեպքում կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի պահանջել լրացուցիչ կամ կրկնակի փորձաքննության անցկացում: Լրացուցիչ կամ կրկնակի փորձաքննությունն անց է կացվում այն պահանջած կողմի հաշվին: Եթե փորձաքննությունն անց է կացվել Ապահովադիրի հաշվին, և փորձաքննության արդյունքները ճանաչվել են Ապահովագրողի կողմից, ապա վերջինս հատուցում է Ապահովադիրին փորձաքննության եզրակացության մեջ նշված վնասի չափով: Ընդ որում՝ հատուցման ընդհանուր չափը չի կարող գերազանցել Ապահովագրական պատահարի պահին Ապահովագրողի պատասխանատվության ընդհանուր չափը:

